

## ATTENTION!

Parishioners and Friends of St. Gregory Church  
may sponsor the weekly issue of the Sunday Bulletin.  
For details, please contact  
the parish office at 626-449-1523.

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու Ծխականներն ու  
Բարեկամները կրնան հովանավորել  
Եկեղեցու շաբաթական թերթիկը  
Մանրամասնություններու համար հեռաձայնել  
եկեղեցու Գրասենեակը՝ 626-449-1523 թիւով

Office Hours: Tues. - Sat. 9:00 a.m.-4:00 p.m.  
Եկեղեցու գրասենեակի ժամեր:  
Գշ.- Շբ. 9:00 կ.ա.- 4:00 կ.ե.

**St. Gregory Armenian Church Hall Rentals**  
Եկեղեցու «Կիրակոս» եւ «Եկատեան» Սրահները  
Տրամադրելի են Ձեր Բոլոր Առիթներուն  
Yegavian and Geragos Halls are available for your

- ❖ Weddings                                      Հարսանիքներ
- ❖ Baptism                                        Կնունքներ
- ❖ Birthdays                                    Տարեդարձներ
- ❖ Anniversaries                                Հոգեճաշեր
- ❖ Hokejash and any other occasion      Եւ այլն

For more info, please call:

**Vahe Charkhutian 562-715-8730.**

Մանրամասնութեան Համար Հեռաձայնել՝  
Վահէ Չարխրութեանին՝ 562-715-8730 թիւով



*St. Gregory The Illuminator Armenian Apostolic Church*

Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի

## Sunday Bulletin

Հոգեւոր հովիւ՝  
**Տէր Սարգիս Ա. Քհնյ. Փետրոյեան**

Կիրակի, 3 Մարտ 2013

Սուրբ Պատարագ՝ կ.ա. ժամը 10:30ից

Քարոզ՝ կ.ա. ժամը 11:30ից



**Archpriest Fr. Sarkis Petoyan, Pastor**

Sunday, March 3, 2013

Divine Liturgy 10:30 a.m.

Spiritual Message 11:30 a.m.

*Welcome to our visitors! Our Family of parishioners joyfully  
invites you to make St. Gregory parish your spiritual home.  
Please join us for fellowship in the Yegavian Hall following  
services today!*

2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107 • Tel. 626-449-1523 • Fax: 626-449-7039  
E-Mail: stgregoryarmenianchurch@yahoo.com • www.saintgregoryarmenianchurch.com

## Ղուկասու Աւետարանէն (16:1-31)

### Անհրաւ Տնտեսի Առակը

Եւ Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Հարուստ մարդ մը կար, որ տնտես մը ունէր. անոր վրայ ամբաստանութիւն եղաւ, իբր թէ կը վատնէր իր տիրոջ ինչքերը: Տէրը կանչեց զայն եւ ըսաւ անոր. այս ի՞նչ բան կը լսեմ քու մասիդ, տո՛ւր քու տնտեսութեանդ հաշիւը, որովհետեւ այլեւս չես կրնար տնտես ըլլալ: Տնտեսը իր մտքէն ըսաւ. ի՞նչ պէտք է ընեմ, քանի որ տէրս ինձմէ կ'առնէ տնտեսութիւնս. աշխատիլ չեմ կրնար, մուրալ կ'ամչնամ: Գիտեմ թէ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ տնտեսութենէս հեռացուիմ զիս ընդունին իրենց տուները: Եւ իր տիրոջ պարտապաններէն իրաքանչիւրը մէկ առ մէկ քովը կանչելով ըսաւ առաջինին. դուն իմ տիրոջս որքա՞ն պարտք ունիս: Եւ ան ըսաւ. հարիւր մար ձէթ եւ տնտեսը ըսաւ անոր. ա՛ն քու պարտագիրդ եւ նստէ՛ ու անմիջապէս գրէ՛ «յիսուն»»: Ապա ըսաւ միւսին. դո՛ւն որքան պարտք ունիս: Եւ ան ըսաւ. հարիւր քոռ ցորեն: Տնտեսը ըսաւ անոր. ա՛ն քու պարտագիրդ եւ նստէ՛ ու գրէ՛ «ութսուն»»: Եւ Տէրը գովեց անհրաւ տնտեսը, որովհետեւ իմաստութեամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները իրենց սերունդին մէջ աւելի իմաստուն են, քան լոյսի որդիները»:

«Եւ ես կ'ըսեմ ձեզի՝ անհրաւ մամոնայէն ձեզի բարեկամներ շինեցէք, որպէսզի երբ այդ պակսի՝ յաւիտեանական յարկերուն մէջ ընդունին ձեզ: Քիչ բանի մէջ հաւատարիմ եղողը շատի մէջ ալ հաւատարիմ է, իսկ քիչի մէջ անհրաւը, շատի մէջ ալ անհրաւ է: Արդ, եթէ անհրաւ մամոնային մէջ հաւատարիմ չեղաք՝ ճշմարիտը ո՞վ պիտի վստահի ձեզի: Եւ եթէ օտարին պատկանող բանի մէջ հաւատարիմ չեղաք՝ ձերինը ո՞վ պիտի տայ ձեզի: Ոչ մէկ ծառայ կրնայ երկու տիրոջ ծառայել, որովհետեւ եթէ առեմ մէկը՝ պիտի սիրէ միւսը. կամ եթէ մեծարեմ մէկը՝ պիտի արհամարեմ միւսը: Չէք կրնար ծառայել թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մամոնային»:

## St. Gregory Armenian Church Parish Directory

Parish Council . . . . .	Richard Mushegain	909 578 48 65
Ladies Society . . . . .	Joan Meymarian . . . . .	626 794 6771
Men's Forum . . . . .	Berj Gourdikian . . . . .	626 355 87 80
Friendship Club . . . . .	Isabel Kouyoumjian . . . . .	626 446 60 58
A.C.Y.O Seniors . . . . .	Armand Yerjanian . . . . .	626-354-2909
Choir Director . . . . .	Elise Tashjian . . . . .	626 356-9208
Hovsepian School . . . . .	Office . . . . .	626 578 13 43
Hovsepian School . . . . .	Shakeh Haroutiounian . . . . .	818 437 0229
Saturday School . . . . .	Norayr Dadouryan . . . . .	626 683 72 11
Sunday School . . . . .	Marguerite Hougasian . . . . .	626 351 81 37

### Upcoming Events

- Wed 3/6/2013. . . St. Gregory Ladies Society Michink Dinner . . . 7:30 p.m.
- Wed 3/13/2013. . St. Gregory Friendship Club Luncheon . . . . . 12:00p.m.
- Thu 3/14/2013 . . St. Gregory Men's Forum Dinner . . . . . 7:00p.m.
- Sun 6/2/2013 St. Gregory Name Day and Fr. Sarkis' 15th Anniversary  
of Ordination to Holy Priesthood of Christ . . . . . 12:30p.m.
- Sun. 6/9/2013.St. Gregory Sunday School Family Picnic . . 2:00 - 5:00 p.m.  
(Garfield Park on Mission St. in South Pasadena)
- Fri. 06/21/2013 . St. Gregory Hovsepian School Graduation . . . . . 6:00p.m.

### ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԽՆԴՐԱՆՔՆԵՐ

Հոգեհանգստեան խնդրանքները հաճեցէք ներկայացնել մինչեւ Հինգշաբթի Կէսօր, որպէսզի կարելի ըլլայ յիշել թերթիկին մէջ:

### REQUIEM SERVICE (HOKEHANKISD)

We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by Thursday noon for printing in the Sunday Bulletin.



St. Gregory the Illuminator  
Armenian Apostolic Church of Pasadena

## Men's Forum

(Ladies & Families Always Welcome)

### Monthly Dinner Meeting

Thursday, March 14, 2013 - 7:00p.m.



Guest Speaker  
**Dr. Archpriest  
Fr. Zaven Arzoumanian**

Topic  
Christianity in Armenia Prior  
to St. Gregory The  
Illuminator".

At  
St. Gregory the Illuminator Armenian Apostolic Church  
Yegavian Hall  
2215 E. Colorado Blvd. Pasadena, CA 91107  
Donation \$15

**RSVP'S Are A Must As Dinner Will Be Served**

R.S.V.P. Mr. Khajag Konialian: 626-351-0216  
Mr. Art Gourdikian: 626-399-1914  
Church Office (Vera): 626-449-1523  
Please become a sponsor. Call us for details.

## Luke 16:1-31

Now He was also saying to the disciples, "There was a rich man who had a manager, and this manager was reported to him as squandering his possessions.

"And he called him and said to him, 'What is this I hear about you? Give an accounting of your management, for you can no longer be manager.'

"The manager said to himself, 'What shall I do, since my master is taking the management away from me? I am not strong enough to dig; I am ashamed to beg. I know what I shall do, so that when I am removed from the management, people will welcome me into their homes.' "And he summoned each one of his master's debtors, and he began saying to the first, 'How much do you owe my master?' "And he said, 'A hundred measures of oil.' And he said to him, 'Take your bill, and sit down quickly and write fifty.' "Then he said to another, 'And how much do you owe?' And he said, 'A hundred measures of wheat.' He said to him, 'Take your bill, and write eighty.' "And his master praised the unrighteous manager because he had acted shrewdly; for the sons of this age are more shrewd in relation to their own kind than the sons of light. "And I say to you, make friends for yourselves by means of the wealth of unrighteousness, so that when it fails, they will receive you into the eternal dwellings. "He who is faithful in a very little thing is faithful also in much; and he who is unrighteous in a very little thing is unrighteous also in much. "Therefore if you have not been faithful in the use of unrighteous wealth, who will entrust the true riches to you? "And if you have not been faithful in the use of that which is another's, who will give you that which is your own? "No servant can serve two masters; for either he will hate the one and love the other, or else he will be devoted to one and despise the other. You cannot serve God and wealth.

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Կը խնդրուի անջատել ձեր բջիջային հեռախօսները  
եկեղեցի մտնելէն առաջ:

### ATTENTION

Please turn off your cell phone when entering the church.

**St. Gregory Sunday School  
Classes**

**11:00a.m.- 12:30p.m. Dunaians Hall**

You may register your 4-15 year old students

**There is no charge to attend classes**

Students are taught the sharagans and prayers of the Armenian Church along with Bible verses and appropriate Biblical songs

*Train up a child in the way he should go  
And when he is old, he will not depart from it*

Proverbs 22:6

**Registration in person or call:**

**Church Office (626) 449-1523**

**Marguerite Hougasian (626) 351-8137**

**Սբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցույ  
Կիրակնօրեայ Վարժարան**

Դասաւանդութիւնները՝ ամէն Կիրակի  
առաւօտեան ժամը 11-էն 12:30  
Տունայեան Սրահին մէջ

Կրնաք արձանագրել ձեր 4-15 տարեկան երեխաները  
Դասընթացքը անվճար է  
Աշակերտները կը սորուին Շարականներ, Հայկական  
Եկեղեցույ Աղօթքներ եւ Սբ. Գիրքէն հատուածներ ու երգեր


*Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը,  
որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի*  
Առակաց 22:6

Արժ. Տ. Սարգիս Ա. Քինյ Փեթոյեան  
եւ Սբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցույ  
Ծխական Խորհուրդը  
Ուրախութեամբ կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու  
Մեծ Պահքի Հսկման արարողութեան,  
որուն պիտի նախագահէ Թեմիս Առաջնորդ՝  
**Գերշ. Տ. Յովնան ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ**  
Արարողութեան աւարտին փեղի կ'ունենայ  
աւանդական պահքի հիւրասիրութիւն



Archpriest Fr. Sarkis Petoyan  
& the Parish Council of St. Gregory Armenian Church  
Joyfully invite you to join our Parish Family  
to the Lenten Vigil Service (husgoom)  
Presided by H. E.  
**Archbishop Hovnan Derderian**  
Diocesan Primate

Traditional Lenten meal to be served after the Service.







*St. Gregory Armenian Church  
Pasadena*



*Lenten Service*

Wednesday  
March 13, 2013 at 7:00 pm

2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107

**(Եփեսացւոց) 4:17-5:14**



Ուրեմն սա՛ կը յայտարարեմ ու Տէրոջմով կը վկայեմ, որ դուք այլեւս չընթանաք այնպէս՝ ինչպէս ուրիշ հեթանոսները կ'ընթանան, իրենց միտքին ունայնութեան մէջ: Անոնց միտքը խաւարած է, եւ իրենք ուծացած են Աստուծոյ կեանքէն՝ իրենց մէջ եղած անգիտութեան եւ իրենց սիրտին կուրութեան պատճառով: Անզգայ դարձած՝ անձնատուր եղան ցոփութեան, որպէսզի ամէն տեսակ անմաքրութիւն գործեն ազահութեամբ: Բայց դուք ա՛յսպէս չսորվեցաք Քրիստոսը, եթէ իսկապէս լսեցիք զինք եւ սորվեցաք իրմէ՝ Յիսուսի մէջ եղող ճշմարտութեան համաձայն՝ որպէսզի թօթափէք ձեր նախկին վարքին վերաբերող Հին մարդը, որ ապականած է խաբեբայ ցանկութիւններով, նորոգուիք ձեր հոգիով, ու հագնիք նո՛ր մարդը, որ ստեղծուած է արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ՝ Աստուծոյ պատկերին համաձայն: Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութի՛նը խօսեցէք իրարու հետ՝, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: Բարկացէ՛ք, բայց մի՛ մեղանչէք. արեւը թող մայր չմտնէ ձեր բարկացած վիճակին վրայ, ու տեղ Մի՛ տաք Չարախօսին: Ա՛ն որ կը գողնար՝ ա՛լ թող չգողնայ. այլ մանաւանդ թող աշխատի՝ իր ձեռքերով գործելով ինչ որ բարի է, որպէսզի բան մը ունենայ տալու կարօտեալին: Ո՛չ մէկ վատ խօսք թող ելլէ ձեր բերանէն, հապա՛ ինչ որ բարի է, շինութեան կարքին համեմատ, որպէսզի շնորհք տայ լսողներուն: Եւ մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով դուք կնքուեցաք ազատագրութեան օրուան համար: Ամէն տեսակ դառնութիւն, զայրոյթ, բարկութիւն, գոչիւն ու հայհոյութիւն թող վերցուին ձեզմէ՝ ամէն տեսակ չարամտութեան հետ. եւ քա՛ղցր եղէք իրարու հանդէպ, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի:

Ուրեմն նմանեցէ՛ք Աստուծոյ՝ սիրելի զաւակներու պէս, եւ ընթացէ՛ք սիրոյ մէջ, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու մեզի համար ընծայեց ինքզինք Աստուծոյ՝ որպէս պատարագ ու զոհ անուշաբոյր հոտ ըլլալով:

Բայց պոռնկութեան եւ ամէն տեսակ անմաքրութեան կամ ազահութեան անունն իսկ թող չլիզուի ձեր մէջ, ինչպէս կը պատշաճի սուրբերուն, ո՛չ ալ լրբութեան, յիմար խօսակցութեան կամ խեղկատակութեան, որոնք չեն պատշաճիր. այլ փոխարէնը շնորհակալութի՛նն յայտնեցէք: Քանի գիտէք՝ թէ ո՛չ մէկ պոռնկող, կամ անմաքուր, կամ ազահ, որ կոսապաշտ է, ունի Շար. Թրդ. Էջ



## (Եփեսացւոց) 4:17-5:14



Շար. 5րդ էջէն

որեւէ ժառանգութիւն Քրիստոսի եւ Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Ո՛չ մէկը թող խաբէ ձեզ ունայն խօսքերով, որովհետեւ այս բաներուն պատճառով Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ: Ուրեմն բաժանակից մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ ժամանակին դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջմով. ուստի ընթացէ՛ք լոյսի գաւակներու պէս, քանի որ Հոգիին պտուղը ամէն տեսակ բարութեամբ, արդարութեամբ ու ճշմարտութեամբ է: Քննեցէ՛ք թէ ի՛նչ է Տէրոջ հաճելին, եւ ընկերակից մի՛ ըլլաք խաւարին անպտուղ Գործերուն, այլ փոխարէնը կշտամբեցէ՛ք զանոնք: Որովհետեւ անոնց ըրածը գաղտնի բաներու մասին խօսիլն իսկ ամօթ է. բայց ամէն բան որ կշտամբուած է՝ կը յայտնաբերուի լոյսին միջոցով, որովհետեւ լոյսն է որ կը յայտնաբերէ ամէն ինչ:

Ուստի կ'ըսէ. «Արթնցի՛ր, դուն որ կը քնանաս, ու կանգնէ՛ մեռելներէն, եւ Քրիստոս պիտի փայլի քու վրայ»:

### Մեծ Պահնգ Երջանի Հսկումներ Եւ Սիրոյ Ծառ

Մեծ Պահնգ շրջանին ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին եկեղեցոյս մէջ տեղի պիտի ունենայ հսկման արարողութիւն: Արարողութիւնէն ետք աւանդական դառնած պահնգ համեղ ընթրիքը պիտի սպասարկուի Եկաւեան սրահին մէջ: Նուիրատուութիւններ կարելի է կատարել Տիկ. Ժանէթ Գեորգեանի, Տիկ. Վարդուհի Եաղլըճեանի եւ Տիկ Ծօն Մէյմերիանի միջոցաւ:

### Vesper services (Husgoom)


As of Wednesday February 13, 2013 will be held in the church sanctuary every Wednesday at 7:00 PM, and will be followed by Lenten supper (Siro-Jash) at Yegavian Hall: To sponsor or for donations please contact Mrs Vartouhi Yaglegian, Mrs Jeannette Kevorkian or Mrs Joan Meymarian

## RELIGIOUS EDUCATION DEPARTMENT RETREAT COMMITTEE OF WESTERN DIOCESE

Under the Auspices of His Eminence  
**Archbishop Hovnan Derderian, Primate**

Presents

### Annual Retreat



## “We Believe in God”

What it means to experience a fresh explosion of faith?

**March 19-20, 2013**

In the charming city of Sierra Madre, Mater Dolorosa Retreat Center  
700 N. Sunnyside Ave., Sierra Madre, CA 91024

*As children of God let us update our faith by exploring & practicing characteristics of believers:  
Being humble, generous, just, attentive to Christ's voice, loving, pure in heart,  
sincere, peaceful, zealous for good works, led by the Spirit and abounding in work of the Lord*

Come & join peaceful atmosphere of spiritual reflection, meditation on God's word and the  
**Stations of the Cross to Calvary**  
God's Footprints to Calvary

Morning Prayer, Holy Communion, Lectures, Discussions and Video Presentation  
And reflections on the movie

*For further information, please contact*  
**Lena Simonian (818) 383-1322; Lucy Tashjian (818) 755-1817**



Ladies Society of  
St. Gregory Armenian Church  
**Annual Meechink Dinner**

Geragos Hall  
Wednesday, March 6, 2013  
Church service: 6:30p.m. Dinner 7:30p.m.

***A Musical Program***

Menu: Lenten Dinner Sponsored By:

Mr. & Mrs. Garbis Balekjian r. & Mrs. Krikor Konialian  
Ms Margaret Dadourian Mr. & Mrs. Haig Mermerian  
Ms.Rosalie Derder Mr. & Mrs. David Mgrublian  
Mr. & Mrs. George Dunaian Ms. Hilda Murachanian  
Mr. & Mrs. Hartyoony Hilalian Ms. Vicky Parian  
Mr. & Mrs. Popkin Simonian

**RSVP is a must!**

Church Office 626-449-1523  
Ivy Grashian 626-446-1796  
Jeannette Kevorkian 818-244-7222

**Tickets will be sold also on  
Sundays & Wednesdays at The Church**

Donation: \$25

Only tables of 10 are reserved with advance payment

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ  
**Տարեկան Միջինք - Հսկում**

Ընթրիք եւ Յայտագիր

Կազմակերպութեամբ՝ Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան  
Զորեքշաբթի, Մարտ 6, 2013

Հսկում՝ 6:30-ին.

Պահիք ճաշ եւ Երաժշտական Յայտագիր՝ 7:30-ին

Նուէր՝ **\$25**

**Ephesians 4:17-5:14**

Now this I affirm and insist on in the Lord: you must no longer live as the Gentiles live, in the futility of their minds. They are darkened in their understanding, alienated from the life of God because of their ignorance and hardness of heart. They have lost all sensitivity and have abandoned themselves to licentiousness, greedy to practice every kind of impurity. That is not the way you learned Christ! For surely you have heard about him and were taught in him, as truth is in Jesus. You were taught to put away your former way of life, your old self, corrupt and deluded by its lusts, and to be renewed in the spirit of your minds, and to clothe yourselves with the new self, created according to the likeness of God in true righteousness and holiness.

So then, putting away falsehood let all of us speak the truth to our neighbors for we are members of one another. Be angry but do not sin; do not let the sun go down on your anger, and do not make room for the devil. Thieves must give up stealing; rather let them labor and work honestly with their own hands, so as to have something to share with the needy. Let no evil talk come out of your mouths, but only what is useful for building up, as there is need, so that your words may give grace to those who hear. And do not grieve the Holy Spirit of God, with which you were marked with a seal for the day of redemption. Put away from you all bitterness and wrath and anger and wrangling and slander, together with all malice, and be kind to one another, tenderhearted, forgiving one another, as God in Christ has forgiven you.

Therefore be imitators of God, as beloved Children, and live in love, as Christ loved us and gave himself for us, a fragrant offering and sacrifice to God.

But fornication and impurity of any kind, or greed, must not even be mentioned among you, as is proper among saints. Entirely out of place is obscene, silly, and vulgar talk; but instead, let there be thanksgiving. Be sure of this, that no forni-

*Cont. on page 8*

## Միջինք

Մեծ պահոց ճիշդ կէտը յատկանշող օրը կը կոչուի ՄԻՋԻՆԷ:

Ան կը գշտուի Մեծ Պահքի 24-րդ օրը, այսինքն չորրորդ շաբթուան Չորեքշաբթի օրը: Միջինքը զգաստութեան ու ժուժկալ կեանք թելադրող կրօնական ամենաերկար պահեցողութեան՝ Մեծ Պահքին կէս ժամանակաշրջանը նուաճուած ըլլալու աւետումն է, որ իբր այդ կը նկատուի նաեւ խնդութեան առիթ: Այս իրականութեան լոյսին տակ, պէտք է հետեցնել որ ան յատուկ նշանակութեամբ կրօնական տօն մը չէ: Ուրեմն առաւելաբար ժողովրդական համախմբումի մը առիթն է ան, կորով եւ բարոյական քաջալերանք ներշնչելու հաւատացեալներուն, որպէսզի անոնք իմաստալից պահեցողութիւնը նոյն ոգիով շարունակեն երկրորդ կիսուն եւս, մինչեւ պահքի լրումը, կամ՝

Ա. Զատիկ:

### Ephesians 4:17-5:14

*Cont. from page 7*

cator or impure person, or one who is greedy (that is, idolater), has any inheritance in the kingdom of Christ and of God.

Let no one deceive you with empty words, for because of these things the wrath of God comes on those who are disobedient. Therefore do not be associated with them. For once you were darkness, but now in the Lord you are light. Live as children of light for the fruit of the light is found in all that is good and right and true. Try to find out what is pleasing to the Lord. Take no part in the unfruitful works of darkness, but instead expose them. For it is shameful even to mention what such people do secretly; but everything exposed by the light becomes visible, for everything that becomes visible is light.

Therefore it says,

" Sleeper, awake! Rise from the dead, and Christ will shine on you."



Archpriest Fr. Sarkis Petoyan and  
the Parish Council of  
**St. Gregory Armenian Church**



*Prayerfully Invite you to Attend  
All Lenten Husgoom Prayer Vigils*

**Wednesday, March 6, 6:30 p.m.**

*Followed by Special Michink Dinner*

**Wednesday, March 13 7:00 p.m.**

**Wednesday, March 20 7:00 p.m.**

*All services will be conducted in Armenian and English,  
using our state-of-the-art user-friendly service books for what  
will be an enriching and spiritually-rewarding experience.  
You are encouraged to remain for a fellowship supper in the  
Yegavian Hall.*

*Տէր Սարգիս Աւագ Քհնյն. Փետրեան եւ Սբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդի Անդամները  
միասնաբար կը հրաւիրեն ձեզ ներկայ գտնուելու Հսկումի  
բոլոր արարողութիւններուն*

*Չորեքշաբթի, Մարտ 6, 2013 Երեկոյեան ժամը 6:30ին եւ  
Միջինքի ընթրիք անմիջապէս ետք*

*Չորեքշաբթի, Մարտ 13, 2013 Երեկոյեան ժամը 7ին*

*Չորեքշաբթի, Մարտ 20, 2013 Երեկոյեան ժամը 7ին*

*Բոլոր արարողութիւնները պիտի ըլլան Հայերէն եւ  
Անգլերէն լեզուներով հետեւելով Հսկումի արդիական եւ  
հոգեպարար նոր ժամագիրքին:*

*Հսկումէն վերջ բոլոր հրաւիրուած էք աւանդական դարձած  
պահոց համեղ ընթրիքին Եկաւեան սրահին մէջ:*

**Remember The Church  
In Your Will**



Մբ. Գրիգոր Լուսավորիչ Հայց. Եկեղեցու Փաստինայի

Մարդկանց Ասուլիսի Յանձնախումբ  
(Տիկիներուն Եւ Ընտանիքներուն Մասնակցութիւնը Միշտ Յանկալի Է)

## Ամսական Ընթրիքի Հաւարոյթ

Հինգշաբթի Մարտ 14, 2013 Ժամը 7:00-ին



Բանախօս՝  
Տոթթ. Տէր Զաւէն Ա.  
Քահանայ Արզումանեան

Նիւթ՝  
Քրիստոնէութիւնը Հայաստանի  
մէջ Նախ քան Մբ. Գրիգոր  
Լուսավորիչ

Մբ. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու Եկատեան Սրահին Մէջ  
2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107  
Ընթրիքի Նուէր՝ \$15

Տեղեր ապահովելու համար հեռաձայնել՝  
Պրն. Խաժակ Գոնիպալեանի: 626-351-0216  
Պրն. Արտաշ Կուրտիքեանի: 626-399-1914  
Եկեղեցու գրասենեակ «Վերային»: 626-449-1523

Կը խնդրենք որ քաջալերէք մեզ հովանաւոր ըլլալով:

## Mid-Lent ("Michink")

The very day of the mid-point of Lent is special, and it is called in Armenian, "michink" meaning "middle". It is the 24th day of Lent, and it occurs on the Wednesday of the fourth week. It must be pointed out that it is not a religious feast of any significance. Thus, it is only to mark a popularly observed occasion. Morally, it inspires and encourages steadfastness, so that the faithful will continue on through the second half, to its end, on Easter Sunday. There are no religious services specifically designated for mid-lent, since it is not a feast day.

The services for that Wednesday are the same as for other Wednesdays of lent, with the sunrise service and the ritual for confession and penance.

Փաստինայի Ս. Գրիգոր  
Լուսավորիչ  
Հայց. Առաք. Եկեղեցու  
ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Շաբաթ Օրերը ժամը՝ 10:00 - 1:00

**ST. GREGORY  
SATURDAY SCHOOL  
EVERY SATURDAY**

**10:00 A.M. 1:00 P.M.**

**Children & Adults are welcome to learn**

**Armenian Language, History, Music and Culture**

## Հոգեհանգիստ

- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի **Արամ Մաթօսեանի** մահուան 2րդ տարեկիցին առիթով: Խնդրողներն են՝ Յարութիւն եւ Մարինա Մաթօսեան եւ ընտանիք, Տոքթ. Գուրգէն եւ Սեդա Մաթօսեան եւ ընտանիք, Տոքթ. Հմայակ եւ Յոլին Մաթօսեան եւ ընտանիք, Տոքթ. Միհրան եւ Սօնա Սիմոնեան, Տոքթ. Գրիգոր եւ Սիւզի Սիմոնեան եւ ընտանիք, Մարտիկ եւ Սիլվա Մազմանեան եւ ընտանիք ինչպէս նաեւ Ար. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Անդամները:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի **Անուշ Պալատեանի** մահուան քառասունքին առիթով: Խնդրողներն են՝ Թագուր եւ Սաթօ Արապեան եւ զաւակները Ռաֆֆի Արապեան, Տէլիտ եւ Անի Ֆօլզ, Մարտիկ Պալատեան եւ զաւակները Փիրայր եւ Մարալ (Պօսթօն), Վահէ եւ Հերմին Վարժապետեան եւ զաւակունք, Վարօ եւ Հանէտի Վարժապետեան, Արմէն եւ Վերօնիքա Վարժապետեան, Արթօ եւ Արաքսի Սվանեան, Պէրճ եւ Այտա Էմիրեան, Արա եւ Մատլէն Կէպէշեան եւ համայն Պալատեան ընտանիք Եգիպտոս եւ Գանատա:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի **Մելինէ Մուխթարեանի** մահուան առաջին տարեկիցին առիթով: Խնդրողներն են՝ զաւակները՝ Մարի Մուխթարեան, Ճան Մուխթարեան եւ ընտանիք, Անահիտ Հինտոյեան եւ ընտանիք, Յակոբ Մուխթարեան:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի **Յակոբ Մարմարեանի** մահուան 10րդ տարեկիցին առիթով: Խնդրողներն են՝ Մարի Մարմարեան, զաւակներն ու թոռները եւ համայն ազգականները լիբանան եւ Գանատա:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի **Գէորգ Գէորգեանի** հոգիին համար: Խնդրողներն են՝ այրին Ճանէթ Գէորգեան, Կերի եւ Սոնա Գէորգեան եւ զաւակները, Գօգօ եգ Անի Գէորգեան եւ զաւակները: ինչպէս նաեւ Ար. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի Անդամները:

### Important Notice

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.

## Requiem

- A requiem service for **Aram Matossian** on the occasion of the 2nd Anniversary of his passing is requested by Haroutioun & Marina Matossian & family, Dr. Kourken & Seta Matossian & Family, Dr. Hamyak & Tsoline Matossian & Family, Dr. Mihran & Sona Simonian, Dr. Krikor & Suzi Simonian & Family, Mardig & Silva Mazmanian & family as well as St. Gregory Parish Council Members.
- A requiem service for **Anoush Balayan** on the occasion of the 40th day of her passing is requested by Takvor & Sato Arabian & children Raffi Arabian, David & Ani Falls, Mardig Balayan & children Jirair & Maral (Boston), Vahe & Hermin Varjabedian & children Garo & Hanadi Varjabedian, Armen & Veronica Vajabedian, Arto & Araxie Sevajian, Berj & Aida Emurian, Ara & Madlen Gebechian and all Balayan family in Egypt & Canada.
- A requiem service for **Melineh Moukhtarian** on the occasion of the 1st Anniversary of her passing is requested by Mary Moukhtarian, John Moukhtarian & family, Anahid Hindoyan and family, Hagop Moukhtarian.
- A requiem service for **Hagop Marmarian** on the occasion of the 10th Anniversary of his passing is requested by Mary Marmarian children & grandchildren and all relatives in Lebanon & Canada.
- A requiem service in memory of Kevork Kevorkian is requested by his widow Jeannette Kevorkian, Gary & Sona Kevorkian & children, Koko & Ani Kevorkian and children as well as St. Gregory Parish Council Members.

### FELLOWSHIP HOUR

Families and individuals are encouraged to host the fellowship hour for happy or otherwise solemn occasions. Please contact church office.

Today's Fellowship Hour is sponsored by  
**Matossian Family** in memory of  
**their father Aram Matossian**